

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

№ 2018-1-5-Ա

ք. Երևան

07.02.2018թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2018 թվականի փետրվարի 7-ի նիստում քննարկեց 2017 թվականի նոյեմբերի 28-ին Էդգար Աշոտի Մարտիրոսյանի (այսուհետ՝ բողոքարկող) կողմից ներկայացված օգտակար մոդելի (հայտ AM20170109U) արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Օգտակար մոդելի հայտը մերժվել էր հետևյալ հիմքերով.

Գործակալությունը որոշում է մերժել արտոնագիր տալը ամբողջությամբ, քանի որ ներկայացված հավակնության սահմանմամբ՝ հայտարկված օգտակար մոդելը չի համապատասխանում «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ Օրենքի 15-րդ հոդվածով սահմանված արտոնագրաունակության «ոչ ակնհայտության» պայմանին: Փորձաքննության 15.09.2017թ. մերժման ծանուցագրին ի պատասխան 29.09.2017թ. ներկայացված նյութերում բերված է հետևյալ ճշգրտված հավակնության սահմանումը՝ «Եռաչափ կոնստրուկտոր խաղալիքի պատրաստման եղանակ, ըստ որի խաղալիքի դետալները միակցվում են միմյանց ելուստ-փոսիկ զույգի միջոցով՝ ըստ մոդելի կառուցվածքի. տարբերվում է նրանով, որ խաղալիքի դետալների արտաքին մակերևույթները հարթ են, բոլոր մակերևույթներում ունեն միառժամանակ հաջորդաբար տեղակայված ելուստներ և փոսիկներ՝ ցանկացած դետալ ցանկացած դետալի միակցվում են արտաքին մակերևույթներին պատկանող եռաչափ հարթության մեջ գտնվող ցանկացած հարթությամբ՝ կոմբինացիաներով ելուստների և փոսիկների միջոցով»: Սակայն նշված հավակնության սահմանման ոչ բոլոր հատկանիշներն են վերաբերում «եղանակ» առարկան բնութագրող հատկանիշներին, ուստի ըստ էության տվյալ օգտակար մոդելը բնութագրող եղանակին վերաբերող հատկանիշներն են՝ 1. խաղալիքի դետալները միակցվում են միմյանց ելուստ-փոսիկ զույգի միջոցով՝ ըստ մոդելի կառուցվածքի; 2. ցանկացած դետալ ցանկացած դետալի միակցվում են արտաքին մակերևույթներին պատկանող եռաչափ հարթության մեջ գտնվող ցանկացած հարթությամբ՝ կոմբինացիաներով ելուստների և փոսիկների միջոցով: Նշվածներից 1-ին՝ «խաղալիքի դետալները միակցվում են միմյանց ելուստ-փոսիկ զույգի

միջոցով՝ ըստ մոդելի կառուցվածքի» հատկանիշը բացահայտված է www.youtube.com/watch?v=u9gSCYxojb8 տեղեկատվության աղբյուրում, իսկ 2-րդ՝ «ցանկացած դետալ ցանկացած դետալի միակցվում են արտաքին մակերևույթներին պատկանող եռաչափ հարթության մեջ գտնվող ցանկացած հարթությամբ՝ կոմբինացիաներով ելուստների և փոսիկների միջոցով» հատկանիշը՝ <https://www.youtube.com/watch?v=1WEWJ0X6xug>, <http://bairn.site/deti/miagkie-konstruktory-dlia-detei-raznoobrazie-vidov-preimyshestva-osobennosti-i-otzyvy.html>, <https://habrahabr.ru/company/amperka/blog/257843/>, http://blukatik.com/product_11015.html, <https://www.amazon.co.uk/Wader-WADERNEEDLEBLOCK500-Needle-Blocks-500/dp/B012N0WM78> տեղեկատվության աղբյուրներում:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ այն չի համապատասխանում «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ Օրենքի 15-րդ հոդվածով սահմանված արտոնագրաունակության «ոչ ակնհայտության» պայմանին:

Բողոքարկողը շարունակեց պնդել բողոքը բավարարելու վերաբերյալ իր տեսակետը:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ որոշումն իրավաչափ է համապատասխանում օրենքի պահանջներին:

Համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով բողոքարկման խորհուրդը:

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել էդգար Աշոտի Մարտիրոսյանի կողմից ներկայացված օգտակար մոդելի (հայտ AM20170109U) արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը և փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ